




«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն  
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,  
E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

Արագածոտնի մարզպետ Աշոտ Միմնյանին  
HETQ.am-ի լրագրող Դիանա Ղազարյանից

(Էլ-փոստ՝ [diana1khazaryan@gmail.com](mailto:diana1khazaryan@gmail.com),  
հեռ.՝ 098-74-16-15)



Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ ամբողջական տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1.1991 թվականից մինչ օրս, ընդհանուր առմամբ, որքա՞ն գումար է հատկացվել Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող մարզադպրոցի կառուցման/վերանորոգման համար: (Նաև առանձնացված կերպով ներկայացնել հատկացված գումարների որոշումները՝ ըստ արվելիք աշխատանքների պայմանագրերի):

2.Կառավարության կողմից հատկացված գումարներով ինչու՞ մինչ օրս դպրոցն ամբողջովին չի վերանորոգվել:

3.Մինչ օրս արված վերանորոգման աշխատանքները ո՞ր ընկերությունների կողմից են արվել: (Տվյալները ներկայացնել ըստ տարիների՝ ընկերության անվանմամբ, նրանց հատկացված գումարի չափի):

4.Այս պահին ի՞նչ գործունեություն է ծավալում մարզադպրոցը:

5.Մինչ ՀԿ-ին տրամադրել արդյո՞ք մարզադպրոցը ըստ նպատակի գործունեություն ծավալել է:

6.Այժմ ինչպիսի՞ն են մարզադպրոցի շենքային պայմանները:

7. Մարզադպրոցում ի՞նչ ներդրումներ է նախատեսել կատարել «Սևան» մարզական հասարակական կազմակերպությունը:

8.Ինչպես՞ է որոշվել ներդրումների՝ 3 միլիոն դրամ չափը և ի՞նչ է նախատեսում իրականացնել այդ գումարով:

9. Ի՞նչ հանգամանքով է որոշվել ՀԿ-ի կողմից կատարվող ներդրումների չորս տարի ժամկետը:

10. Մարզադպրոցնում ի՞նչ գործունեություն է նախատեսել իրականացնել ՀԿ-ն:

11. Արդյո՞ք ՀԿ-ն պարտավորվել է այդ 50 տարիների ընթացքում շենքը շահագործել միայն որպես մարզադպրոց: (Եթե, այո, կից ներկայացնել, փաստաթուղթը):

12. Կառավարության 27 սեպտեմբերի 2007 թվականի N 1123-Ա որոշումում նշված է 30 միլիոն դրամով Աշտարակի սպորտի դպրոցի կիսակառույց շենքի գնման մասին: Ինչ գնման/գործարքի մասին է խոսքը՝ արդյո՞ք շենքը որևէ կառույցից Արագածոտնի մարզպետարանը նշված ժամանակահատվածում ձեռք է բերել: Եթե, այո, մանրամասնել:

Կանխավ շնորհակալ եմ՝

Դիանա Ղազարյան



17 հուլիս 2017



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 38 35  
 0201 շ. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 38 35  
 0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 38 35 e-mail aragatsotn@mta.gov.am

\_\_\_\_\_ Ձեր 17.07.2017թ գրության  
 \_\_\_\_\_ N \_\_\_\_\_

**„ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ,,  
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
 ԼՐԱԳՐՈՂ ԴԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ**

ՀՀ կառավարության 2007թ սեպտեմբերի 6-ի թիվ 997-Ն որոշմամբ՝ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արագածոտնի մարզպետարանին հատկացված 30 մլն. դրամ գումարով „Պետական գնումների գործակալություն,, ՊՈԱԿ-ի 2007թ նոյեմբերի 8-ի թիվ ՄԲԱՊՁԲ-07/45 գնման պայմանագրով ձեռք է բերվել Աշտարակ քաղաքի սպորտ դպրոցի կիսակառույց շենքը, որպես պետական սեփականություն համարվող անշարժ գույք: Ձեռք բերման տարվանից մինչև օրս մարզպետարանի կողմից մարզադպրոցի կիսակառույց շենքի վրա վերանորոգման և վերականգնման աշխատանքներ չեն կատարվել: 2009թ-ից մինչև 2016թ վերանորոգման և վերականգնման աշխատանքներ կատարվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության „Քաղաքաշինական ԾԻԳ,-ի կողմից :

ՀՀ կառավարության 2017թ հունիսի 20-ի թիվ 761-Ա որոշմամբ մարզպետարանի տնօրինության տնօրինության տակ գտվող Աշտարակ քաղաքի կիսակառույց մարզադպրոցը հանձնվել է ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

**Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**